ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

1	Ո՞վ էր Հայաստանի առաջին հանրապետությունում հանրային կրթության և արվեստի նախարարը.

1) Յու. Ղամբարյանը
2) Լևոն Շանթը
3) Գուրգեն Էդիլյանը
4) Նիկոլ Աղբալյանը

2	Որքա՞ն է Կուր գետի երկարությունը.

1) 500 կմ
2) 1113 կմ
3) 1000 կմ
4) 1720 կմ

3	Որտե՞ղ էր գտնվում Նանե աստվածուհու մեհյանը.

1) Երազամույնում
2) Երիզայում
3) Թիլ ավանում
4) Բագառիճում

4	Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը. «Ժխտել՝ նշանակում է սպանել զոհերին երկրորդ անգամ»:

1) Անդրեյ Սախարով
2) Առնոլդ Թոյնբի
3) Էլի Վիզել
4) Ֆրիտյոֆ Նանսեն

5	Հայոց եկեղեցու վարչական իրավունքներն ու պարտականությունները, եկեղեցու և պետության փոխհարաբերությունները սահմանող կանոնադրությունը կոչվել է՝

1) թանզիմաթ
2) հրովարտակ
3) պոլոժենիե
4) կոնդակ

6	XIX դ. կեսերի հայ քաղաքական կյանքի հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը
բ. «Բարենպատակ ընկերություն» խմբակի ստեղծումը
գ. Կ.Պոլսի ուսումնական խորհրդի անդամների կողմից «Ազգային սահմանադրության» ստեղծումը
դ. ՀՅԴ կուսակցության ստեղծումը
ե. Արմենական կուսակցության ստեղծումը

1) ա, գ, բ, դ, ե 2) ե, բ, դ, ա, գ 3) գ, բ, ա, ե, դ 4) գ, ա, դ, բ, ե

7 Ո՞ր արքայի մասին է պատմիչի ստորև բերվող վկայությունը.

«Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ…և մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը»:

1) Տրդատ III Արշակունու
2) Երվանդ Սակավակյացի
3) Տիգրան I Երվանդյանի
4) Արտաշես I–ի

8 Թվարկված քաղաքական կուրսերը դասավորել ըստ դրանց գործադրման սկզբի ժամանակագրական հաջորդականության.

ա. գյուղատնտեսության կոլեկտիվացում
բ. Վերակառուցում
գ. արդյունաբերացում
դ. ռազմական կոմունիզմ

1) դ, գ, ա, բ
2) դ, բ, ա, գ
3) գ, ա, բ, դ
4) դ, ա, գ, բ

9 Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը, ըստ «Որոգայթ փառացի», կոչվում էր՝

1) Հայոց ազգային ժողով
2) Հայոց տուն
3) Հայոց կառավարություն
4) Հայոց խորհրդարան

10 Որտե՞ղ է գտնվել Թորգոմա տուն կամ Թեգարամա երկիրը.

1) Եփրատի վերին ավազանում
2) Տիգրիսի վերին ավազանում
3) Արաքսի ստորին ավազանում
4) Ճորոխի ստորին ավազանում

11 Ո՞վ է ընտրվել Հայոց ազգային խորհրդի նախագահ.

1) Ավետիս Ահարոնյան
2) Սամսոն Հարությունյանը
3) Անդրանիկ
4) Հովսեփ Արղությանը

12 Ու՞մ օրոք է հատվել առաջին արքայական դրամը.

1) Շամի
2) Արշամի
3) Արտաշես I-ի
4) Տիգրան II-ի

13 Ե՞րբ է տեղի ունեցել Ծումբի ճակատամարտը .

1) 371թ.
2) 894թ.
3) 852թ.
4) 998թ.

14 Ե՞րբ է Տիգրան Մեծը Ծոփքը միավորել իր թագավորությանը.

1) Ք. ա. 87 թ.
2) Ք. ա. 93 թ.
3) Ք. ա. 95 թ.
4) Ք. ա. 94 թ.

15 Թվարկվածներից ո՞վ տրոցկիսկտական ընդդիմության մասնակից չէ.

1) Լ. Տրոցկի
2) Գ. Օրջոնիկիձե
3) Գ. Զինովև
4) Լ. Կամենև

16 Ո՞վ է ստորև բերվող վկայության հեղինակը.
«Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ [գետերը] խառնվում են, և այնտեղ, բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ»:

1) Պլուտարքոսը
2) Խորենացին
3) Պոլիբիոսը
4) Ստրաբոնը

17 Ե՞րբ է առաջին անգամ հիշատակվում «Նաիրի» երկրանունը.

1) Ք. ա. XII դարում
2) Ք. ա. XIII դարում
3) Ք. ա. XIV դարում
4) Ք. ա. XI դարում

18 Խորհրդային պետության ստալինյան ղեկավարությունը նէպից հրաժարվելու և կուլակությանը որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանն անցնելու մասին հայտարարեց՝
1) 1923 թ.
2) 1927 թ.
3) 1933 թ.
4) 1929 թ.

19 Թվարկվածներից ո՞ր գավառը չէր մտնում 1849 թ. ստեղծված Երևանի նահանգի մեջ.

1) Նոր Բայազետի
2) Երևանի
3) Նոր Նախիջևանի
4) Օրդուբադի

20 Աշխատության վերնագիրը համապատասխանեցնել հեղինակի անվանը.

1) Մատթեոս Ուռհայեցի	ա. «Հայոց պատմություն»
2) Ստեփանոս Օրբելյան	բ. «Տարեգիրք»
3) Վարդան Արևելցի	գ. «Պատմութիւն»
4) Արիստակես Լաստիվերցի	դ. «Ժամանակագրություն»
5) Թովմա Արծրունի	ե. «Պատմութիւն նահանգին Սիսական»
6) Կիրակոս Գանձակեցի	զ. «Արծրունիների տան պատմություն»
	է. «Տիեզերական պատմություն»

1) 1–ե, 2–բ, 3–է, 4–գ, 5–զ, 6–ա
2) 1–դ, 2–ե, 3–է, 4–գ, 5–զ, 6–ա
3) 1–է, 2–ե, 3–դ, 4–զ, 5–ա, 6–բ
4) 1–դ, 2–ե, 3–գ, 4–ա, 5–զ, 6–բ

21 Քանի՞ զինվորից էր բաղկացած ուրարտական բանակի յուրաքանչյուր գունդ.

1) 1000
2) 3000
3) 2000
4) 5000

22 Ո՞րն էր 703 թ. հակաարաբական ապստամբության պատճառը.

1) հայ հոգևորականությանը հարկատու դարձնելը
2) Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում հայ նախարարների ողջակիզումը
3)Արմինիայի առաջին արաբ ոստիկանի դաժան հարկահանությունը և կրոնական հալածանքները
4) Հերթ ոստիկանի «աշխարհագիրը»

23 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. ՀՀ Սահմանադրության փոփոխված տարբերակի ընդունումը
բ. Երևանի արհեստական կաուչուկի գործարանի կառուցումը
գ. Լևոն Տեր–Պետրոսյանի հրաժարականը
դ. «Անուշ» օպերայի բեմադրումը Ալեքսանդրապոլում
ե. Օլեգ Եսայանի նշանակումը ԼՂՀ վարչապետ
զ. Ա. Թամանյանի կողմից Երևանի գլխավոր հատակագծի կազմումը
1) զ, դ, գ, ա, բ, ե
2) դ, զ, բ, ե, գ, ա
3) զ, բ, դ, ա, ե, գ
4) դ, զ, բ, ա, ե, գ

24 Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վերջինը.
ա) Թիգլաթպալասար III–ի փորձը՝ գրավելու Վանը
բ) բարիդրացիական հարաբերությունների հաստատումը Վանի թագավորության և Ասորեստանի թագավոր Սինաքերիբի միջև
գ) Վանի թագավորության միասնական դիցարանի ստեղծումը
դ) կիմերների առաջին թշնամական արշավանքները Վանի տերության դեմ
ե) Վանի տիրակալի հիշատակվելը կիմերների հետ Ասորեստանի դեմ թշնամական գործողություններ ծրագրելիս

1) ա 2) բ 3) ե 4) դ

25 Բարձրությամբ ՀՀ-ի երկրորդ գագաթն է.

1) Սիփանը
2) Նեմրութը
3) Արագածը
4) Կապուտջուղը

26 Ո՞վ է գումարել Դվինի I ժողովը.

1) Բաբգեն Ա–ն
2) Հովհաննես Ա Մանդակունին
3) Հովհաննես Բ Գաբեղենացին
4) Ներսես Բ Բագրևանդացին

27 Կատարել համապատասխանեցում.

ա. Կապադովկիա ներխուժած հռոմեական զորքի հրամանատարը
բ. Անկախ Ծոփքի վերջին արքան
գ. Տիգրան Մեծին հավատարմության երդում տված Մարաստանի թագավորը
դ. Տիգրան Մեծի կողմից մահապատժի ենթարկված Սելևկյան թագուհի

1) Սելենե
2) Սուլլա
3) Գոդերձ II
4) Միհրդատ
5) Արտանես

1) ա–2, բ– 5, գ–4, դ–1
2) ա–5, բ–4, գ–2, դ–1
3) ա–5, բ–4, գ–3, դ–2
4) ա–5, բ–4, գ–3, դ–1

28 «Երևանյան զորախումբ» հասկացությունը համապատասխանեցնել իր բովանդակությանը.

1) 1918թ. Մայիսյան հերոսամարտերի օրերին գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ գործող զորամիավորման անվանումը
2) Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակի շարքերում գործող հայկական կամավորական ջոկատին տրված անվանումը
3) ռուսական հրամանատարության հրամանով 1917 թ. վերջերին կազմավորված զորամիավորում, որի հրամանատարը գեներալ Թովմաս Նազարբեկյանն էր
4) արևմտահայերից կազմավորված դիվիզիա, որի հրամանատարն Անդրանիկն էր

29 Ե՞րբ է ԱՄՆ–ի կառավարությունն իր բողոքը հայտնել հայերի նկատմամբ իրագործվող բռնությունների դեմ.

1) 1915 թ. հունիսին
2) 1916 թ. փետրվարին
3) 1916 թ. մայիսին
4) 1915 թ. ապրիլին

30 Ո՞րն էր Խալդի աստծո «սրբազան քաղաքը».

1) Արդինի–Մուսասիրը
2) Մենուախինիլին
3) Տուշպա–Վանը
4) Թեյշեբաինին

31 Կատարել համապատասխանեցում.

1) Արաբո	ա. Հովսեփ Արղության
2) Աղբյուր Սերոբ	բ. Մխիթար Սեֆերյան
3) Հրայր Դժոխք	գ. Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան
4) Վարդան	դ. Նազարեթ Նորաշխարհյան
5) Իշխան	ե. Գրիգոր Մոսեյան
6) Նիկոլ Դուման	զ. Արմենակ Ղազարյան
7) Գրգո	է. Կարապետ Թուր-Սարգսյան
8) Գարուն Աղասի	ը. Սերոբ Վարդանյան
9) Մխո Շահեն	թ. Առաքել Մխիթարյան
	ժ. Սարգիս Մեհրաբյան

1) 1-ժ, 2-ա, 3-ը, 4-դ, 5-թ, 6-բ, 7-զ, 8-է, 9-գ
2) 1-թ, 2-ը, 3-զ, 4-ժ, 5-դ, 6-ա, 7-գ, 8-է, 9-ե
3) 1-բ, 2-դ, 3-զ, 4-ը, 5-ժ, 6-ա, 7-գ, 8-ե, 9-է
4) 1-թ, 2-ը, 3-զ, 4-ժ, 5-ա, 6-գ, 7-ե, 8-է, 9-բ

32 Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի՝ այսօր հայտնի հնագույն պետությունը.

1) Արատտա
2) Ուրարտու
3) Էթիունի
4) Միտաննի

33 Հայոց ո՞ր արքան է ասել հետևյալ խոսքերը.
«Ես ազատության էի ձգտում, քանզի լավ էի համարում, որ ինքս ազատ լինեմ և որդիներիս ազատություն թողնեմ»:
1) Վահագնը
2) Տիգրան Երվանդյանը
3) Երվանդ Սակավակյացը
4) Պարույրը

34 Թուրքիայում կարճ ժամանակով իշխանության եկած և հայկական բարենորոգումների ծրագրով հանդես եկած կուսակցությունը կոչվում էր՝
1) «Ազատություն և հավասարություն»
2) «Միություն և համաձայնություն»
3) «Արդարություն և զարգացում»
4) «Ազատություն և համաձայնություն»

35 Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառները.

ա. Խորհրդային Ադրբեջանի՝ հայկական տարածքները նվաճելու ծրագրին Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը պայմանավորված էր
քեմալա–բոլշևիկյան մերձեցմամբ:
բ. 1940–ական թթ. սփյուռքահայության շրջանում ԽՍՀՄ հեղինակության բարձրացման պատճառը Խորհրդային Հայաստանում Հայ դատի
հանձնախմբերի ստեղծումն էր:
գ. Փետրվարյան ապստամբությունը պայմանավորված էր Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեության արգելմամբ:
դ. 1990–ական թթ. հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման ձախողման պատճառը Թուրքիայի՝ Հայաստանին նախապայմաններ ներկայացնելն էր՝ հատկապես Ղարաբաղյան խնդրի հետ կապված:
ե. Մայիսյան ապստամբության պատճառը Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեության արգելումն էր:
զ. Հայաստանում մենատնտես գյուղացիության թվաքանակի աճը պայմանավորված էր գյուղատնտեսության կոլեկտիվացմամբ:

1) դ, ե
2) բ, զ
3) ա, դ
4) գ, զ

36 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. գերի վերցված պարսից մոգերի մահապատիժը Զարեհավանում
բ. հայ նախարարների՝ քրիստոնեության առերես ուրացումը Տիզբոնում
գ. Անգղի եկեղեցին քանդելու փորձը պարսից զորքի և մոգերի կողմից
դ. հայ նախարարների ժամանումը Տիզբոն՝ Հազկերտ II–ի արքունիք
ե. Աշուշա բդեշխին և Վասակ Սյունու զավակներին պատանդ թողնելը Տիզբոնում

1) բ, դ, գ, ե, ա
2) դ, բ, ե, գ, ա
3) դ, բ, ե, ա, գ
4) բ, դ, ե, գ, ա

37 Պատմական գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության.

ա. Դավիթ բեկ
բ. Հովսեփ Էմին
գ. Վ. Բեհբութով
դ. Պ. Ցիցիանով
ե. Իսրայել Օրի
զ. մահտեսի Շահմուրատ

1) զ, ե, ա, դ, բ, գ
2) գ, ա, զ, դ, բ, ե
3) ե, բ, դ, զ, ա, գ
4) զ, ե, ա, բ, դ, գ

38 Կատարել համապատասխանեցում.

Կազմակերպություն	Գործիչ
1) «Բարենպատակ ընկերություն»	ա. Հակոբ Կալոյան
2) «Միություն ի փրկություն»	բ. Գրիգոր Արծրունի
3) «Պաշտպան հայրենյաց»	գ. Կարապետ Նշկյան
4) «Հայրենասերների միություն»	դ. Ներսես Աբելյան
	ե. Պետրոս Հայկազունի

1) 1–բ, 2–դ, 3–գ, 4–ե
2) 1–ե, 2–ա, 3–գ, 4–դ
3) 1–դ, 2–գ, 3–ա, 4–բ
4) 1–ե, 2–ա, 3–բ, 4–գ

39 Ի՞նչ էր կոչվում Հայաստանի կառավարիչն Աքեմենյան տիրապետության օրոք.

1) հյուպարքոս
2) սատրապ
3) ստրատեգոս
4) մարզպան

40 Ի՞նչ է նշանակում շահաստան.

1) բուն քաղաք
2) շահական նստավայր
3) շուկա
4) միջնաբերդ

41 Ինչո՞ւ կնքվեց Մծբինի 40–ամյա խաղաղության պայմանագիրը.

1) քանի որ Պարսկաստանի դաշնակից Հայաստանը հանդես եկավ միջնորդությամբ
2) Հռոմի դաշնակից Հայաստանը նրան ստիպեց գնալ զիջումների
3) քանի որ պարտված հռոմեացիները չցանկացան շարունակել պատերազմը
4) քանի որ պարտված Պարսկաստանը հաշտություն էր խնդրել

42 Ո՞վ է նշանակվել Խամսայի մելիքությունների առաջին կառավարիչ.

1) Հակոբջանը
2) Շահնազարը
3) Մելիքջանը
4) Եգանը

43 Վանի թագավորության արքաներից ո՞վ է գահակալել ութերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

ա. Սարդուրի I	զ. Մենուա
բ. Ռուսա II	է. Սարդուրի II
գ. Իշպուինի	ը. Ռուսա III
դ. Արգիշտի I	թ. Արգիշտի II
ե. Ռուսա I	ժ. Սարդուրի III

1) թ 2) ժ 3) բ 4) է

44 Պարսից ո՞ր թագավորին են պատկանում հետևյալ խոսքերը.
«Ամեն քրիստոնյա, որ իմ իշխանության տակ է, հայոց հավատին թող հարի»:

1) Հազկերտ III
2) Խոսրով I
3) Խոսրով II
4) Շապուհ II

45 XIX դ. կեսերի հայ քաղաքական կյանքի հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը
բ. «Բարենպատակ ընկերություն» խմբակի ստեղծումը
գ. Կ.Պոլսի ուսումնական խորհրդի անդամների կողմից «Ազգային սահմանադրության» ստեղծումը
դ. ՀՅԴ կուսակցության ստեղծումը
ե. Արմենական կուսակցության ստեղծումը

1) ա, գ, բ, դ, ե
2) ե, բ, դ, ա, գ
3) գ, բ, ա, ե, դ
4) գ, ա, դ, բ, ե

46 Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

ա. Հ. Քաջազնունու կառավարությանը փոխարինածը հայտնի է «բյուրո–կառավարություն» անունով:
բ. Այն կազմակերպությունը, որին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում օգտագործում էին խորհրդային իշխանությունները, կոչվում էր «Ազատ եկեղեցական եղբայրություն» կամ «Նոր եկեղեցի»:
գ. Քարվաճառի ազատագրման գործողությունը ստացավ «Հարսանիք լեռներում» անվանումը:
դ. Հայ–ռուսական երևանյան բանակցությունների ավարտին նախաստորագրված փաստաթուղթը կոչվում էր «Եզրափակիչ որոշման արձանագրություն»:
ե. ՀՀ Սահմանադրության նախագծի մշակման նպատակով 1990 թ. նոյեմբերի 15–ին ստեղծված մարմինը ՀՀ Ազգային ժողովի սահմանադրական հանձնաժողովն էր:
զ. Հայաստանի կոմունիստական կուսակցության շարքերում գոյություն ունեցող տրոցկիստական երկու խմբերն իրենց անվանում էին «Ուղղափառ մարքսիստներ» և «Տրոցկիստական միություն»:
է. Միջազգային պայմանագրերի չեղյալ հայտարարելը կոչվում է դենոնսացիա:
1) ա, գ, ե
2) բ, դ, է
3) բ, դ, ե
4) գ, ե, զ

47 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. «Հանրապետություն» քաղաքական միավորման ձևավորումը
բ. ՀՀ եռաստիճան դատական համակարգի ձևավորումը
գ. ՀՀ–ի վարչատարածքային փոփոխությունների իրականացումը՝ մարզերի ստեղծումը

դ. նախկին խորհրդային հանրապետությունների հայտարարությունները Անկախ պետությունների համագործակցություն ստեղծելու մասին
ե. Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումը
1) ե, դ, ա, գ, բ
2) ե, դ, գ, ա, բ
3) դ, ե, ա, բ, գ
4) ա, գ, դ, ե, բ

48 Թվարկվածներից որո՞նք են արտացոլում 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի անմիջական հետևանքները.
ա. Արևելյան Հայաստանի ևս մի մեծ հատված՝ Երևանի և Նախիջևանի խանությունները, անցան Ռուսաստանին:
բ. Ռուսական իշխանություններն արագորեն բնակեցրին Արևելյան Հայաստանը ռուս կազակներով:
գ. Ռուսաստանը Պարսկաստանին վերադարձրեց Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի և Ատրպատականի տարածքները:
դ. Պատերազմի արդյունքները գոհունակությամբ չընդունվեցին արևմտահայերի կողմից:
ե. Պարսկական տիրապետությունից ազատագրվելու արևելահայության հույսերը չարդարացան:
զ. Տասնյակ հազարավոր հայեր, չկամենալով մնալ մահմեդական տիրապետության տակ, 1828 թ. գարնանից սկսեցին վերաբնակվել Ռուսաստանյան կայսրությանն անցած տարածքներում:
է. Պատերազմի ավարտից հետո Արևմտյան և Արևելյան Հայաստանները վերամիավորվեցին:
1) բ, ե, է
2) ա, գ, զ
3) գ, զ, է
4) ա, ե, դ

49 Լուսավորչի տոհմին պատկանող կաթողիկոսներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
ա. Ներսես Մեծ
բ. Հուսիկ
գ. Վրթանես
դ. Արիստակես
1) գ, դ, ա, բ
2) դ, գ, ա, բ
3) դ, գ, բ, ա
4) գ, դ, բ, ա

50 Գործառույթները համապատասխանեցնել Կիլիկյան Հայաստանի արքունի գործակալին.

1. սենեսկալ
2. կանցլեր
3. թագադիր
4. պայլ
5. գունդստաբլ

ա. արքունի պալատի կառավարիչը. տնօրինում էր արքունի եկամուտները և ծախսերը
բ. թագավորի առաջին խորհրդականը. արքայի բացակայության դեպքում փոխարինում էր նրան, իսկ թագավորի անչափահասության դեպքում իրականացնում էր արքայի և ամբողջ երկրի խնամակալությունը

գ. իրականացնում էր արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը, գահաժառանգների դաստիարակությունը, տնօրինում հանրային աշխատանքները, պետական պարհակներն ու հարկահանության գործը
դ. բանակի ընդհանուր հրամանատարը Կիլիկիայում
ե. հանդիսությունների ժամանակ թագ էր դնում թագավորի գլխին, կապում արքայական նշանները, հետևում էր արքունի կարգ ու կանոնի պահպանմանը
զ. ղեկավարում էր բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ

1) 1–ա, 2–զ, 3–ե, 4–գ, 5–բ
2) 1–գ, 2–ա, 3–ե, 4–բ, 5–դ
3) 1–ա, 2–զ, 3–ե, 4–բ, 5–դ
4) 1–դ, 2–գ, 3–զ, 4–բ, 5–ա

51 Թվարկվածներից որո՞նք 1921 թ. Փետրվարյան ապստամբության արդյունքներից չեն.

ա. Խորհրդային իշխանությունը ստիպված էր առավել զգուշորեն գործել:
բ. Բանտերից ազատվեցին բոլշևիկների կողմից ձերբակալված և խոշտանգված հարյուրավոր մարդիկ:
գ. Ապստամբության ղեկավարները ենթարկվեցին առավելագույն պատժի՝ գնդակահարության:
դ. Ապստամբության բոլոր մասնակիցներին, ներառյալ ղեկավարներին, շնորհվեց համաներում:
ե. Հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակեցին:
զ. Հայկական բանակի աքսորից ազատված սպաներին թույլ չտրվեց վերադառնալ Հայաստան:
է. Ամրապնդվեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը:
ը. Վճռական քայլեր ձեռնարկվեցին երկրի սոցիալ–տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ:
1) ա, դ, ե
2) գ, զ, ը
3) գ, զ, է
4) բ, դ, է

52 Թվարկվածներից որո՞նք են 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի հետևանքներ.

ա. Հայաստանը վճռական պահին օգնության հասավ Ռուսաստանին, որը շարունակում էր կռվել թուրքերի դեմ:
բ. Դրվեց ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը:
գ.Դրական դեր խաղաց թուրքերի դեմ պայքարում Անդրկովկասի ժողովուրդների փոխհամաձայնեցված ու համատեղ պայքարը խրախուսելու համար:
դ. Բնաջնջումից փրկվեցին Անդրկովկասի ժողովուրդները:
ե. Թուրքական կողմը ստիպված եղավ մեղմացնել պահանջները և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ կնքել Բաթումի հաշտության պայմանագիրը:
զ. Նորահռչակ հայկական պետությունը դարձավ աշխարհամարտի մասնակից կողմ և այս հիմքի վրա իրավական (դե յուրե) ճանաչում ստացավ Անտանտի երկրների կողմից: է. Հայությունը հնարավորություն ստացավ պարտված թշնամուն թելադրելու հաշտության սեփական պայմանները:
1) ա, բ, է
2) բ, դ, ե
3) բ, ե, զ
4) գ, դ, զ

53 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Խանասորի արշավանքը
բ. հայերի կոտորածն Ադանայում
գ. Պետոյի և Մարտիկի զոհվելը
դ. Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական ժողովը Էջմիածնում
ե. Վանի հերոսամարտը՝ Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ
զ. հայ–թաթարական ընդհարումների ավարտը
է. Զեյթունի ապստամբությունը՝ Նազարեթ Չավուշի ղեկավարությամբ
ը. Սասունի ինքնապաշտպանությունը՝ Անդրանիկի գլխավորությամբ
թ. Սասունի հերոսամարտը՝ Մեծն Մուրադի ղեկավարությամբ
ժ. Մշո Ս. Առաքելոց վանքի կռիվը
1) բ, դ, զ, ը, ժ, ա, գ, ե, է, թ
2) ժ, ե, զ, դ, ա, գ, բ, թ, ը, է
3) թ, է, բ, գ, ա, դ, ը, ե, ժ, զ
4) թ, է, ե, գ, ա, ժ, ը, դ, զ, բ

54 Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություն–ներից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը.

ա. թյուրք–սելջուկների առաջին արշավանքը Հայաստան
բ. Անիի հռչակումը մայրաքաղաք
գ. Սմբատաբերդ լեռան մոտ հայ բնակչության կոտորածը
դ. Տաշիր–Զորագետի թագավորության հիմնադրումը
ե. թյուրք–սելջուկների երրորդ արշավանքը Հայաստան
զ. Սյունիքի թագավորության հռչակումը
է. Վարդանակերտի ճակատամարտը
ը. Դավիթ Կյուրապաղատի մահը
թ. Մանազկերտի ճակատամարտը
ժ. Անիի գրավումը թյուրք–սելջուկների կողմից

1) ա
2) զ
3) գ
4) թ

55 Ընտրել երեք ճիշտ պնդումները.

ա. Քանի որ 1980–ական թթ. հաստատվեց, որ Հայկական լեռնաշխարհը կազմել էինդեվրոպական նախահայրենիքի մի մասը, ուստի ինքնըստինքյան վերացավ նաևհայերի եկվոր լինելու վարկածի արժանահավատությունը:
բ. Ներկայիս Հայաստանի Հանրապետությունն իր մեջ ամբողջությամբ ընդգրկում է միայն Մեծ Հայքի Այրարատ աշխարհը, իսկ ԼՂՀ–ն՝ Արցախ աշխարհը:
գ. Իմաստության և տիեզերական ջրերի Հայ(ա) աստծո պաշտամունքը կապվում էր Հայկական լեռնաշխարհի Եփրատ և Տիգրիս գետերի ակունքների հետ:
դ. Հայկական լեռնաշխարհում առաջին խոշոր երկրաշարժի մասին տվյալները վերաբերում են Ք. ա. 341 թ., ըստ որոնց՝ այդ երկրաշարժի պատճառը Թոնդուրեկ ևՆեմրութ հրաբուխների ժայթքումն էր:
ե. Ըստ վրացական ավանդության, որը գրի է առնվել XI–XIII դդ., Թարգամոսի ավագ որդի Հայոսից առաջացել են հայերը, իսկ մնացած վեց որդիներից՝ կովկասյան վեց ժողովուրդները:
զ. Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից փրկված Նոյ նահապետի տապանը հանգրվանել է «Արարատ լեռների վրա», և բոլոր ազգերն առաջացել են Նոյի երեք որդիներից:

է. Հունական ավանդազրույցի համաձայն՝ Յասոնի հետ Կոլխիդա նավարկած թրակիացի Արմենոսը, որն աչքի էր ընկել իր քաջագործություններով, գրավում է Հայաստանը, դառնում առաջին թագավորը, և նրա պատվին էլ Հայաստանը կոչվում է «Արմենիա»:

1) բ, գ, է
2) գ, դ, ե
3) ա, գ, զ
4) գ, դ, զ

56 Գտնել այն պատճառները, որոնք հիմք դարձան հայ իշխանների դժգոհության և Անտիոքի իշխանի որդի Ֆիլիպի ձերբակալության համար.
ա. Ֆիլիպը սկսեց արհամարհել հայոց ծիսակարգը և հովանավորել խաչակիրներին:
բ. Ֆիլիպը սերտ կապեր հաստատեց հայ եկեղեցական վերնախավի հետ և փորձում էր նրան դուրս բերել հայ իշխանների դեմ:
գ. Ֆիլիպը պարտադրում էր հայերին կատարել եկեղեցիների միավորման վերաբերյալ տված խոստումները:
դ. Ֆիլիպը արքունիքից հեռացնում էր հայ իշխաններին և պաշտոնները հանձնում խաչակիրներին:
ե. Հայ իշխանները ապստամբություն էին բարձրացրել Ֆիլիպի դեմ, որը դաժանորեն ճնշվել էր:
զ. Ֆիլիպը սկսեց կողոպտել արքունի գանձերը և դրանք ուղարկել Անտիոք:
է. Խաչակիր ասպետները դավադրաբար սպանեցին Կոստանդին Գունդստաբլին:
1) ա, դ, է
2) ա, դ, զ
3) բ, գ, դ
4) գ, ե, զ

57 Զորամիավորումների անունները համապատասխանեցնել հրամանատարների անուններին.
1) Հայկական կորպուս
2) Առանձին հայկական կորպուսի Երևանյան զորախումբ
3) Հատուկ հավաքական ջոկատ
4) Սարդարապատի ջոկատ
5) Կովկասյան ռազմաճակատ
6) Ղարաքիլիսայի ճակատամարտում հայկական առաջին դիվիզիա

ա. Դանիել Բեկ–Փիրումյան
բ. Անդրանիկ
գ. Ա. Չխենկելի
դ. Ալեքսանդր Բեյ–Մամիկոնյան
ե. Մովսես Սիլիկյան
զ. Թովմաս Նազարբեկյան
է. գեներալ Պրժևալսկի

1) 1–զ, 2–ա, 3–է, 4–դ, 5–բ, 6–գ
2) 1–ե, 2–գ, 3–զ, 4–ա, 5–է, 6–դ
3) 1–զ, 2–ե, 3–բ, 4–ա, 5–է, 6–դ
4) 1–զ, 2–ե, 3–դ, 4–ա, 5–գ, 6–բ

58 Թվարկվածներից որո՞նք են ներկայացնում 1890–ական թվականների հայերի զանգվածային կոտորածների հետևանքներ.
ա. Ոչնչացվեց մոտ 300 հազար հայ:
բ. Գերմանական կառավարությունը ստանձնեց որբ մնացած հայ երեխաների խնամքը:
գ. Հայերն ամբողջությամբ ոչնչացվեցին անգամ Կ. Պոլսում և Զմյուռնիայում:
դ. Հայերի ժառանգները պահպանեցին իրենց ունեցվածքը:

ե. 100 հազար հայ գաղթեց Ռուսաստան, 200 հազարը՝ Եվրոպա և Ամերիկա:
զ. Արևմտահայ բազմաթիվ գավառներ հայաթափվեցին և բնակեցվեցին քրդերով ու թուրքերով:
է. Տեղահանված հայերը բնակեցվեցին Միջագետքի ապահով շրջաններում:
1) ա, ե, զ
2) բ, դ, է
3) գ, ե, զ
4) ա, գ, է

59 Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.

ա. Հայ ժողովուրդը VIII–IX դարերում բազմիցս ապստամբել է օտար լծի դեմ:
բ. Հայ նախարարական համակարգը, չնայած խալիֆայության դաժան բռնու-թյուններին, պահպանել էր իր բաղադրատարրերը, որոնց հողատիրական հիմքը կազմում էին Բագրատունյաց, Սյունյաց, Մամիկոնյան և Արծրունիների իշխանական տիրույթները:
գ. Հայ եկեղեցին արաբական տիրապետության շրջանում շարունակում էր իր ազգապահպան գործունեությունը:
դ. Արմինիայի առաջին արաբ ոստիկանի դաժան հարկահանությանը և կրոնական հալածանքներին հայերը պատասխանեցին ապստամբությամբ, որը գլխավորեց Աշոտ իշխանի որդին՝ Գագիկ Բագրատունին:
ե. Մժեժ Գնունին մինչև VII դարի 40–ական թթ. վերջը գլխավորում էր Հայաստանի վերամիավորման գործը:
զ. Սասուն–Խութ գավառում տեղի ունեցած հուժկու ապստամբությունը ղեկավարում էր Աշոտ Մսակերը:
է. Կարինը պաշարող ապստամբները, տեղեկանալով Արճեշի ճակատամարտի տխուր վախճանի մասին, Մուշեղի գլխավորությամբ շարժվեցին դեպի Բագրևանդ գավառ:
1) դ, ե, զ
2) դ, ե, է
3) ա, բ, դ
4) գ, զ, է

60 Գտնել ճիշտ պատասխանը.
Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում խաչակիր մատենագիրներն այս երկիրն անվանել են՝

1) Հայաստան
2) Կիլիկյան Հայաստան
3) Ծոփք
4) Մեծ Հայք

61 Կատարել համապատասխանեցում.

Հեղինակ
1) Հովհաննես Դրասխանակերտցի
2) Վարդան Արևելցի
3) Ստեփանոս Տարոնեցի
4) Սմբատ Գունդստաբլ

Աշխատության ընդգրկման ժամանակահատվածը
ա. Աշխատանքն ընդգրկում է 951-1272 թթ.
բ. Աշխատանքն ընդգրկում է «անսկիզբ» ժամանակներից մինչև 1267 թ.
գ. Աշխատանքն սկսում է Հայկի ու Բելի ավանդությունից և հասցնում 924 թ.

դ. Աշխատանքի երրորդ բաժինն ընդգրկու է 885-1004 թթ.
ե. Աշխատանքն ընդգրկում է 952-1136 թթ.

1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ե
2) 1-ե, 2-գ, 3-դ, 4-ա
3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
4) 1-ե, 2-գ, 3-բ, 4-ա

62 Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.
ա. Հռոմի դրածո Արտավազդ III–ի վտարումը Հայաստանից
բ. Արտավազդ II–ի եղերական մահը
գ. հռոմեա–պոնտական պատերազմների սկիզբը
դ. Առաջին եռապետության կազմավորումը Հռոմում
ե. Արտաշես II–ի դավադիր սպանությունը
զ. Խառանի ճակատամարտը
է. թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ հռոմեացիների վտարումը Ասորիքից, Կիլիկիայից, Փյունիկիայից, Պաղեստինից և Հրեաստանից
ը. հռոմեա–պոնտական պատերազմների ավարտը
թ. Կրասոսի պարթևական արշավանքի սկիզբը
ժ. Միհրդատ Եվպատորի մահը
1) դ
2) է
3) զ
4) թ

63 Թվարկվածներից որո՞նք են Մծբինի 298 թ. պայմանագրի հետևանքներ.

ա. Բյուզանդիան հաստատվեց Վիրքում և Պոնտոսում:
բ. Տրդատ III–ը վերջնականապես ճանաչվեց Մեծ Հայքի թագավոր:
գ. Փոքր Հայքը վերադարձվեց Հայաստանին:
դ. Տրդատ III–ը սկսեց զբաղվել երկրի հզորացմամբ և շինարարությամբ:
ե. Արշակունիները ամրապնդվեցին Հայոց գահին:
զ. Պարսից արքա Շապուհ II–ը ճանաչեց Մեծ Հայքի անկախությունը:
է. Հայաստանը թոթափեց Աքեմենյանների գերիշխանությունը:
1) ա, գ, զ
2) բ, դ, ե
3) ա, բ, է
4) դ, ե, զ

64 Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

ա. 1877 թ. ամռանը թուրքերը, մեծ ուժեր կենտրոնացնելով, պաշարում են Բայազետի բերդը, և ավելի քան 23 հազար հոգուց բաղկացած թուրքական զորքերը կատաղի գրոհներ են գործում բերդի վրա, բայց գրավել չեն կարողանում:
բ. 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում՝ Ալեքսանդրապոլ–Կարս ուղղությամբ, հիմնական հարվածող ուժը հայազգի գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի հրամանատարությամբ գործող 52–հազարանոց Կովկասյան կորպուսն էր:
գ. 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմում Մ. Լոռիս–Մելիքովի և Ա. Տեր–Ղուկասովի կողքին մարտնչում էին գեներալներ Հովհաննես Լազարևը, Բեհբութ Շելկովնիկովը, Հակոբ

Ալխազովը, Լևոն Մելիքովը, Ստեփան Քիշմիշևը և տարաստիճան բազմաթիվ զորահրամանատարներ ու զինվորականներ:
դ. Մկրտիչ Խրիմյանի 1869 թ. պատրիարք դառնալուց հետո «Ազգային սահմանադրությունը» գործարկվեց Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում:
ե. XIX դարի կեսերին Զեյթունն անվանապես էր ենթարկվում Մարաշի փաշայությանը, սակայն միայն իշխանություններին տարեկան որոշ քանակությամբ հարկ էր վճարում:
զ. 1860 թ. մայիսի 24–ին սուլթանի կողմից վավերացված արևմտահայերի «Ազգային սահմանադրությունը» Արևմտյան Հայաստանի ու ամբողջ կայսրության հայ բնակչության կրթամշակութային կյանքը կարգավորող իրավական կարևոր փաստաթուղթ էր:
է. Ըմբոստ Զեյթուն լեռնագավառը իրեն ենթարկելու թուրքական կառավարության ջանքերն ավելի եռանդուն են դարձել, երբ Կովկասից ներգաղթած չերքեզները բնակեցվել են Մարաշի շրջակայքում:
ը. 1860 թ. չերքեզների ավազակային ջոկատների ուղեկցությամբ թուրքական 50–հազարանոց բանակը արշավել է Զեյթունի վրա և ջախջախիչ պարտություն կրել:
թ. 1862 թ. Ազիզ փաշայի կազմակերպած գրոհը Զեյթունի վրա ավարտվել է նրանով, որ թուրքերը, կորցնելով ավելի քան 2000 մարդ և իրենց ունեցած հրանոթները, փախուստի են դիմել:
1) զ, թ, ե
2) բ, դ, է
3) ա, զ, թ
4) ա, զ, ը

65 Հայ կամավորական շարժմանը վերաբերող պնդումներից որո՞նք են սխալ.

ա. Հայոց ազգային բյուրոյի առաջադրած քաղաքական մերձավորագույն նպատակը հանգում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջին:
բ. Ստեղծվեց Հայոց ազգային բյուրոյի գործադիր (կարգադրիչ) մարմին՝ Հ. Արղությանի գլխավորությամբ:
գ. Գործադիր կարգադրիչ մարմնի մեջ մտան Հ. Զավարյանը, Ն. Դումանը, Արմեն Գարոն, Ավ. Ահարոնյանը, Ալ. Խատիսյանը, իսկ 1915 թ.՝ նաև Ռոստոմը:
դ. Կամավորական շարժման գլխավոր նպատակն էր իրականացնել հայկական նահանգների ու Կիլիկիայի ինքնավարության հաստատումը ԱՄՆ–ի հովանու ներքո:
ե. Կամավորներ էին գալիս Ռուսաստանի ամենատարբեր վայրերից, Բալկաններից և ԱՄՆ–ից:
զ. 1914 թ. նոյեմբերի սկզբին արդեն ձևավորվել էին կամավորական չորս ջոկատներ:
է. Առաջին ջոկատի հրամանատարն Անդրանիկն էր, իսկ քաղաքական մասի և ռուսական հրամանատարության հետ կապերը վարում էր Ն. Աղբալյանը:
ը. Պահեստային ուժերի հիման վրա կազմակերպվում է V խումբը՝ Վարդանի գլխավորությամբ:
թ. Նորաստեղծ VI ջոկատի դրամական ապահովումն ու կամավորների հավաքագրումն ստանձնեց Արմենական կուսակցությունը:
1) ա, բ, ե, է
2) բ, գ, ը, թ
3) գ, զ, է, ը
4) գ, դ, է, թ

66 Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

ա. «Այլախոհ» հասկացությունը ի հայտ եկավ 1970-ական թթ., որը բնութագրում էր այն մարդկանց, ովքեր պայքարում էին խորհրդային իրականությունը փոփոխելու համար:
բ. Հայաստանում այլախոհությունը կրում էր հիմնականում ազգային բնույթ:
գ. 1960-ական թթ. սկզբին ազգային զարթոնքի և կորցրած պատմական տարածքները վերադարձնելու գաղափարի շուրջ համախմբված այլախոհները Հայաստանում ստեղծեցին առաջին այլախոհական կազմակերպությունները:

դ. Մեծ Եղեռնի հիսնամյա տարելիցի օրը Երևանում տեղի ունեցան զանգվածային ցույցեր և հանրահավաքներ. Հայաստանում նման ելույթներ եղել էին նաև 1930-ական թթ.:
ե. Պարույր Հայրիկյանին, Աշոտ Նավասարդյանին և ուրիշներին 1970 թ. ազատազրկման դատապարտեցին այն մեղադրանքով, որ «ակտիվ ընդհատակյա գործունեություն են վարել՝ նպատակ ունենալով անջատելու Հայաստանը ԽՍՀՄ-ից և ստեղծելու անկախ հայկական պետություն»:

1) ա, գ
2) գ, ե
3) բ, դ
4) ա, դ

67 Կատարել համապատասխանեցում.

Քաղաք	Հիմնադիր արքա
1) Մծուրք	ա. Վաղարշ II
2) Վաղարշապատ	բ. Տիգրան II
3) Բագարան	գ. Սանատրուկ II
4) Տիգրանակերտ	դ. Երվանդ IV
	ե. Վաղարշ I

1) 1–գ, 2–ե, 3–բ, 4–ա
2) 1–գ, 2–ե, 3–դ, 4–բ
3) 1–գ, 2–ա, 3–դ, 4–բ
4) 1–ա, 2–ե, 3–դ, 4–բ

68 Թվարկվածներից որո՞նք են 1950-1960-ական թթ. հայագիտության զարգացման արդյունքներ.

ա. «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի հրատարակման սկիզբը
բ. «Հրազդան», «Նաիրի» և այլ էլեկտրոնային հաշվիչ բարդ մեքենաների նախագծումը
գ. «Հայ նոր գրականության պատմության» երեք հատորների հրատարակումը
դ. ուրարտական և հելլենիստական շրջանի հուշարձանների պեղումները
ե. Բյուրականի աստղադիտարանի վերածվելը գիտահետազոտական խոշոր կենտրոնի
զ. «Երկունք» և «Նահապետ» պատմական կինոնկարների ստեղծումը
1) բ, գ, զ
2) գ, դ, ե
3) ա, բ, դ
4) ա, գ, դ

69 Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երկրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.
ա. «Արևելյան թատրոնի» կազմավորումը Կ. Պոլսում
բ. Շուշիի թեմական դպրոցի բացումը
գ. Հ. Վարդովյանի երկլեզու թատրոնի ստեղծումը
դ. սիմֆոնիկ նվագախմբի ստեղծումը Հարություն Սինանյանի կողմից
ե. «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» հրատարակման սկիզբը Մխիթարյանների կողմից
զ. Երևանի թեմական դպրոցի բացումը
է. «Բազմավեպ» -ի լույսընծայումը
ը. 600 կմ հեռավորության վրա գունավոր պատկեր հաղորդելու առաջին փորձի իրագործումը
1) զ
2) դ
3) ե
4) է

70 Կատարել համապատասխանեցում.

Ղեկավար	Ինքնապաշտպանության վայր
1) Արմենակ Եկարյան	ա. Մուսա լեռ (Սուետիա)
2) Հայկակ Կոսոյան	բ. Շատախ
3) Հակոբ Կոտոյան	գ. Վան՝ Քաղաքամեջ
4) Ղուկաս Տեռվլեթյան	դ. Ուրֆա
5) Տիգրան Անդրեասյան	ե. Շապին Կարահիսար
6) Մկրտիչ Յոթնեղբայրյան	զ. Վան՝ Այգեստան
	է. Մուշ

1) 1–զ, 2–գ, 3–է, 4–ե, 5–ա, 6–դ
2) 1–գ, 2–ա, 3–է, 4–զ, 5–բ, 6–դ
3) 1–գ, 2–զ, 3–բ, 4–ե, 5–ա, 6–դ
4) 1–դ, 2–է, 3–գ, 4–ե, 5–ա, 6–բ

71 Կատարել համապատասխանեցում.

Պաշտոն

1) Փարիզի խորհրդաժողովում ՀՀ պատվիրակության ղեկավար
2) III կամավորական ջոկատի հրամանատար
3) Շապին–Գարահիսարի Զինվորական խորհրդի ղեկավար
4) Արևմտահայ Ազգային խորհրդի նախագահ
5) Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար
6) Հայաստանի առաջին կառավարության արտաքին գործերի նախարար
7) Հաճընի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար

Գործիչ

ա. Ալեքսանդր Խատիսյան	ե. Ավետիս Ահարոնյան
բ. Ստեփան Շահումյան	զ. Համազասպ
գ. Սարգիս Ճեպեճյան	է. Ղուկաս Տեռվլեթյան
դ. Վահան Փափազյան	ը. Հովհաննես Քաջազնունի

1) 1–բ, 2–գ, 3–զ, 4–ա, 5–դ, 6–ը, 7–է
2) 1–ե, 2–զ, 3–է, 4–դ, 5–բ, 6–ա, 7–գ
3) 1–ե, 2–գ, 3–դ, 4–ա, 5–զ, 6–ը, 7–է
4) 1–ա, 2–է, 3–գ, 4–ե, 5–բ, 6–դ, 7–զ

72 Բերված փաստերից ընտրել երեքը, որոնք տեղ են գտել «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքում.

ա. Ներկայացված է ապագա պետության կառավարման համար նախատեսված օրենքների հավաքածու:
բ. Ներկայացված է խորհրդարանական հանրապետություն ստեղծելու ծրագիր:
գ. Ներկայացված է ապագա պետության բարձրագույն գործադիր իշխանության կառուցվածքը:
դ. Ներկայացված են հայ ժողովրդի հերոսական անցյալը, նրա աշխարհագրական լայնարձակ սահմանները:
ե. Ներկայացված է ապագա պետության բարձրագույն օրենսդիր իշխանության կառուցվածքը:
զ. Գիրքը կոչ է անում հայ երիտասարդներին դուրս գալու օտար բռնակալների դեմ և զենքի ուժով հասնելու ազատության:
է. Քննադատվում է միապետական կարգը՝ այն համարելով հայոց պետականության անկման պատճառներից մեկը:

1) բ, զ, է
2) ա, ե, զ
3) գ, դ, ե
4) դ, զ, է

73 Թվարկվածներից որո՞նք են 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի հետևանքներ.

ա. Հայաստանը վճռական պահին օգնության հասավ Ռուսաստանին, որը շարունակում էր կռվել թուրքերի դեմ:
բ. Դրվեց ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը:
գ. Դրական դեր խաղաց թուրքերի դեմ պայքարում Անդրկովկասի ժողովուրդների փոխհամաձայնեցված ու համատեղ պայքարը խրախուսելու համար:
դ. Բնաջնջումից փրկվեցին Անդրկովկասի ժողովուրդները:
ե. Թուրքական կողմը ստիպված եղավ մեղմացնել պահանջները և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ կնքել Բաթումի հաշտության պայմանագիրը:
զ. Նորահռչակ հայկական պետությունը դարձավ աշխարհամարտի մասնակից կողմ և այս հիմքի վրա իրավական (դե յուրե) ճանաչում ստացավ Անտանտի երկրների կողմից:
է. Հայությունը հնարավորություն ստացավ պարտված թշնամուն թելադրելու հաշտության սեփական պայմանները:
1) բ, ե, զ
2) գ, դ, զ
3) ա, բ, է
4) բ, դ, ե

74 Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. հողային բարեփոխման վերաբերյալ Արտաշես I–ի հրամանագրի հրապարակումը
բ. Մագնեսիայի ճակատամարտը
գ. Գավգամելայի ճակատամարտը
դ. հայազգի զորավարների գլխավորությամբ Անտիոքոս III–ի զորքերի արշավանքը Երվանդական Հայաստանի դեմ
ե. Աքեմենյանների գերիշխանության հաստատումը Հայաստանում
զ. Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
է. Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը
ը. Արտաշես I–ի մահը
թ. Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II–ի դեմ Կյուրոս Կրտսերի ապստամբությունը
ժ. Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքի սկիզբը
1) թ, ե, ժ, գ, բ, դ, զ, է, ա, ը
2) ե, թ, ժ, գ, դ, բ, զ, է, ա, ը
3) ե, թ, ժ, գ, բ, զ, դ, ա, է, ը
4) թ, ե, ժ, գ, բ, դ, է, ա, ը, զ

75 Թվարկվածներից որո՞նք են Հայաստանում նեպի կենսագործման արդյունքներ.

ա. դասակարգային պայքարի վերացումը երկրում
բ. գյուղատնտեսության վերականգնումը
գ. ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնության վերացումը
դ.արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկի՝ պղնձարդյունաբերության վերականգնումը
ե. տնտեսության արդյունաբերացումը
զ. տնտեսության հասնելը զարգացման նախապատերազմյան՝ 1939 թ. մակարդակին

է. բնակչության կենսամակարդակի բարելավումը

1) բ, դ, է
2) բ, դ, ե
3) ա, գ, զ
4) դ, զ, է

76 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. Զանգեզուր–Ղարաբաղի մարզային խորհուրդ
2. Ղարաբաղի ժողովրդական կառավարություն
3. Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ
4. Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտե
5. «Լոռու չեզոք գոտի»

ա. Թիֆլիսի կոնֆերանսի որոշմամբ ստեղծված վարչական միավոր, ուր սահմանվել էր հատուկ կառավարում՝ հայ և վրացի ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անգլիացի գեներալ–նահանգապետի ընդհանուր վերահսկողությամբ
բ. արցախահայության I համագումարում ստեղծված երկրամասի իշխանության մարմին
գ. Զանգեզուրի ազգային խորհրդի հիմքի վրա վերակազմված և Հայաստանի Հանրա-պետության անունից գործող մարմին
դ. ԼՂԻՄ–ի լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրված մարմին, որը գլխա-վորեց արցախցիների ազատագրական պայքարը
ե. Լոռու և Ախալքալաքի գավառներից ստեղծված վարչական միավոր, որը գտնվում էր անգլիացիների վերահսկողության ներքո
զ. ԽՍՀՄ ԳԽ նախագահության կողմից Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծված իշխանության մարմին

1) 1–զ, 2–բ, 3–դ, 4–զ, 5–ա
2) 1–զ, 2–գ, 3–բ, 4–դ, 5–ե
3) 1–ե , 2–բ, 3–դ, 4–զ, 5–ա
4) 1–գ, 2–բ, 3–զ, 4–դ, 5–ե

77 Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
ա. ԼՂԻՄ–ում ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում Ազգային խորհրդի ստեղծումը
բ. Ղարաբաղի ժողովրդական կառավարության ստեղծումը
գ. «Հռչակագիր ԼՂՀ հռչակման մասին» որոշման ընդունումը
դ. Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղին ինքնավար մարզի կարգավիճակ տրամադրելը
ե. Ղարաբաղա–ադրբեջանական պատերազմի սանձազերծումը
1) դ, ե, բ, գ, ա
2) բ, դ, ա, ե, գ
3) բ, դ, ա, գ, ե
4) դ, ա, բ, գ, ե

78 Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
ա. գյուղմիասհարկի շրջանառության մեջ մտնելը
բ. 390–րդ դիվիզիայի կազմացրումը
գ. Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության (ՀԿԵՄ) ստեղծումը
դ. «Մեծ բեկման տարի» հոդվածի հրապարակումը

ե. դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը
զ. Երկրորդ համաշխարհային պատերազմում Կարապետ Սիմոնյանի՝ առաջին հայի՝ հերոսի կոչմանն արժանանալը
է. Նելսոն Ստեփանյանի մահը
1) դ, ե, ա, գ, բ, զ, է
2) գ, ա, ե, դ, բ, զ, է
3) գ, ե, ա, դ, զ, է, բ
4) գ, ա, ե, դ, զ, բ, է

79 Ընտրել երեք սխալ պնդումները

ա. Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492 թ.) համարվել է Բուն Հայոց թվականի սկիզբը:
բ. Հայաստանի չափազանց բարենպաստ պայմաններն ու աշխարհաքաղաքա- կան դիրքը անցյալում և նորագույն շրջանում առաջացրել են տարբեր պետությունների, ժողովուրդների և քոչվոր ցեղերի հետաքրքրությունը:
գ. Հայասան առաջին անգամ հիշատակվում է Ք. ա. XVI դ. խեթական մի արքայի արշավանքների կապակցությամբ, որոնց ժամանակ նրա դեմ դուրս է գալիս այդ երկրի թագավոր Խուկանան:
դ. Խեթական աղբյուրների համաձայն՝ Հայասա թագավորությունն ունեցել է արքունիք, բանակ, արքունի դիվան՝ իր դպիրներով, ինչպես նաև դիցարան:
ե. «Նաիրի» անվամբ իրենց երկիրը կոչել են նաև Վանի թագավորության տիրակալներն ասուրերենով գրված արձանագրություններում:
զ. Հայերի օգտագործած արեգակնային օրացույցի հիմքով տոմարական համա- կարգերից առավել նշանավոր են Հայոց մեծ թվականը, Հայոց միջին թվականը և Հայոց փոքր թվականը:
է. Ըստ Մովսես Խորենացու՝ Տիգրան Մեծը, ի թիվս բազում այլ բարեփոխումների, բարեկարգել ու ճշգրտել է օրացույցը:
ը. Ասուրա–բաբելական աղբյուրներում Հայաստանն «Ուրարտու» անվամբ հիշատակվում է մինչև Ք. ա. IV դարի առաջին կեսը:
1) դ, ե, ը
2) բ, զ, է
3) ա, գ, ը
4) գ, զ, է

80 Թվարկվածներից որո՞նք են բնորոշ իրավապաշտպանին.

ա. պայքարում էր բնության և շրջակա միջավայրի պաշտպանության համար
բ. անընդունելի էր համարում խորհրդային օրենքները և պաշտոնապես հռչակված արժեքները
գ. խորհրդային իշխանություններից պահանջում էր պահպանել օրենքները և ԽՍՀՄ Սահմանադրությունը
դ. խորհրդային իշխանության դեմ զինված պայքար էր մղում
ե. պայքարում էր մարդու իրավունքների պաշտպանության համար
1) գ, դ
2) բ, ե
3) գ, ե
4) ա, դ